ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
MINISTRY OF FOREIGN AFFAIRS OF THE REPUBLIC OF ARMENIA

12/01646
15.2.2012թ

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԻ ԻՐԱՎԱԲԱՆ
ԳԵՎՈՐԳ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻՆ
ք. Երեւան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ

Հարգելի՛ պարոն Հայրապետյան,

Ի պատասխան Ձեր՝ ՀՀ ԱԳՆ ներկայացրած 03.02.2012թ. 153-ի 6 հարցման՝ տեղեկացնում ենք, որ ըստ Վրաստանի խորհրդարանի կողմից 2008թ. ընդունված «Օկուպացված տարածքների մասին» օրենքի 4-րդ հոդվածի 1-ին կետի՝ օտարերկրյա պետությունների քաղաքացիները եւ քաղաքացիություն չունեցող անձինք Աբխազիայի Ինքնավար Հանրապետության տարածք կարող են մուտք գործել միայն Զուգդիդիի մունիցիպալիտետի ուղղությամբ: Ըստ նույն հոդվածի 2-րդ կետի՝ «բացի սույն հոդվածի 1-ին կետով հատկացված տարածքներից, օտարերկրյա քաղաքացիների եւ քաղաքացիություն չունեցող անձանց համար բոլոր այլ ուղղություններից օկուպացված տարածք մուտք գործելն արգելվում է եւ պատժվում համաձայն Վրաստանի քրեական օրենսգրքի»:

Ըստ Աբխազիայի Հանրապետության ԱԳՆ կայքէջի տեղեկատվության (http://www.mfaabkhazia.net/ru/visa/)՝ Աբխազիա մուտք գործելու համար ՀՀ քաղաքացիներն ազատված են մուտքի արտոնագիր ունենալու պահանջից:

Եթե ՀՀ քաղաքացու՝ Ռուսաստանի սահմանը հատել չկարողանալը պայմանավորված է անձնագրային կամ փաստաթղթային խնդիրների առկայությամբ, ապա քաղաքացին կարող է դիմել Դոնի Ռոստովում ՀՀ գլխավոր հյուպատոսություն՝ Հեռ.՝ (7-8632)536454, Էլ. փոստ՝ armgenconsulaterostov@mfa.am, կամ Սոչիում ՀՀ հյուպատոսական գրասենյակ՝ Հեռ.՝ (7-8622)671642,բջջ.(7-918)6137070, Էլ. փոստ՝ armconsulatesochi@mfa.am:

Հավելենք նաեւ, որ քաղաքացու անձնագրում ՌԴ սահմանից Աբխազիայի տարածք մուտք գործելու վերաբերյալ կնիքի առկայության դեպքում ՀՀ ԱԳՆ խստորեն խորհուրդ է տալիս զերծ մնալ տվյալ անձնագրով Վրաստանի տարածք մուտք գործելուց:

Սույն տեղեկատվությունն ենթակա չէ հրապարակման. այն կրում է զուտ տեղեկատվական բնույթ՝ քաղաքացուն իրազեկելու համար:

Հարգանքով՝

ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ ՍԵՐԳԵՅ ՄԱՆԱՍԱՐՅԱՆ

Կատարող՝ Աննա Նաղդալյան
հեռ. 562543